# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<02>> նոյեմբերի-----------2022թ.    N ՄՈ/1637-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/317-2022 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշման 3-րդ կետի պահանջը.

**ո ր ո շ ու մ  ե մ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի մայիսի 2-ի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի ապրիլի 1-ի N ՄՈ/128-2020 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» NՄՈ/317-2022 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
    1) որոշման 1-ին կետում «մինչև 6 ամիս ժամկետով» բառերը փոխարինել «մինչև մրցույթի արդյունքում հաղթող մասնակցի պաշտոնում նշանակվելը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ    Недействительная подпись    Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

VERIFIED OCSP 02.11.2022 14:49:51 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505